Օրենսդրական փոփոխություններ

Նոր առավելություններ՝ օրինապահ հարկ վճարողներին

www.src.am

Օրինապահ հարկ վճարողի անժամկետ հավաստագիր

Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրն այլևս տրամադրվելու է անժամկետ՝ ներկայում գործող մեկ տարի ժամկետի փոխարեն: Բացառություն կկազմեն լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում ընդգրկվելու նպատակով տրամադրվող հավաստագրերը, որոնց համար կպահպանվի գործող ժամկետային կարգավորումը:

Եռամսյակային մշտադիտարկում

Հարկային մարմինը եռամսյակային պարբերականությամբ իրականացնելու է օրինապահ հարկ վճարողի գործունեության արդյունքների մշտադիտարկում՝ ապահովելու հարկ վճարողի շարունակական օրինապահ վարքագծի գնահատումը:

Հավաստագրի գործողության դադարեցում

Եռամսյակային մշտադիտարկման արդյունքներով հարկային մարմինը կարող է դադարեցնել օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողությունը:
Կառավարությունը կսահմանի օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողության դադարեցման դեպքերն ու ընթացակարգերը:

Անհատական և առաջնահերթ սպասարկում

Օրինապահ հարկ վճարողների սպասարկումն իրականացվելու է առաջնահերթ և արտոնյալ պայմաններով:

Հավաստագրի տրամադրումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, յուրաքանչյուր օրինապահ հարկ վճարողի համար կնշանակվի անհատական սպասարկման մասնագետ, որի տվյալները կտրամադրվեն հարկ վճարողին էլեկտրոնային եղանակով:

Ռիսկայնության գնահատման նոր մոտեցում

Համալիր հարկային ստուգումների պլանավորման ընթացքում օրինապահ հարկ վճարողների նկատմամբ ռիսկայնության գնահատման ժամանակ կիրառվելու է լրացուցիչ 0.8 գործակից:

Օրինապահ հարկ վճարողները ավելի քիչ կընդգրկվեն բարձր ռիսկայնությամբ գնահատվող խմբերում՝ օգտվելով առավել բարենպաստ վարչարարությունից:

Հավաստագրի տրամադրման կարգը չի տարածվի ներդրումային ֆոնդերի վրա

Օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման գործընթացը չի տարածվի ներդրումային ֆոնդերի վրա՝ հաշվի առնելով դրանց գործունեության առանձնահատկությունները և նրանց համար գործող բարենպաստ հարկային կարգավորումները: